



«ԱՊԿԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Խմբագրություն՝ ԱՊ01
(Ակտիվի դաս՝ հրապարակային)

1. ԻՆՉ Է ԱՊԿԱ-Ն

ԱՊԿԱ պայմանագրով փոխհատուցվում են ավտոտրանսպորտային միջոցի վարորդի մեղավորությամբ տեղի ունեցած ՃՏՊ-ի արդյունքում երրորդ անձանց պատճառված գույքային վնասները, որոնք գերազանցում են ԱՊԿԱ պայմանագրով հատուցման ենթակա գումարի առավելագույն չափը:

2. ՈՎՔԵՐ Դ ԿԱՐՈՂ ԵՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԱՊԿԱ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԱՊԿԱ պայմանագիր կարող են ձեռք բերել «Նաիրի Ինչուրանս»-ի հետ ԱՊԿԱ պայմանագիր կնքած ֆիզիկական և իրավաբանական անձինք, ովքեր հանդիսանում են՝

- հաշվառված ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերեր,
- ֆինանսական վարձակալության պայմանագրով՝ ավտոտրանսպորտային միջոցի վարձակալներ,
- վարելու միջոցով ավտոտրանսպորտային միջոցներ ներմուծողներ,

3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

Ապահովագրական գումար	Տարեկան ապահովագրավճար
1,000,000 ՀՀ դրամ	5,000 ՀՀ դրամ
2,000,000 ՀՀ դրամ	9,000 ՀՀ դրամ
3,000,000 ՀՀ դրամ	13,000 ՀՀ դրամ

4. ԵՐԲ ԵՎ ԻՆՉ ՉԱՓՈՎ Է ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

Հատուցումն իրականացվում է տուժող կողմի ավտոտրանսպորտային միջոցին պատճառված վնասի մեծության և ԱՊԿԱ պայմանագրի գծով ստացած հատուցման տարբերության չափով, բայց ոչ ավել, քան ԱՊԿԱ պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը:

Օրինակ

Ձեր մեղավորությամբ տեղի ունեցած ՃՏՊ-ի արդյունքում տուժող ավտոմեքենային պատճառված վնասը կազմել է **2,600,000 ՀՀ դրամ**

Ձեր կնքած ԱՊԿԱ պայմանագրով տուժող կողմին կհատուցվի **1,800,000 ՀՀ դրամ**

Եթե **Դուք չունեք** ԱՊԿԱ պայմանագիր՝

Վնասի մնացած 800,000 ՀՀ դրամը տուժողին կհատուցեք **Դուք**

Եթե **Դուք ունեք** ԱՊԿԱ պայմանագիր՝

«Նաիրի Ինչուրանս»-ը Ձեր փոխարեն տուժողին կհատուցի նշված **800,000 ՀՀ դրամը:**

5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել՝

- 1 տարի ժամկետով
- մինչև 1 տարի ժամկետով

Ապահովագրության պայմանագիրը 1 տարուց պակաս ժամկետով կնքելու դեպքում տարեկան ապահովագրավճարի նկատմամբ կիրառվում են հետևյալ կարգավորիչ գործակիցները.

Ապահովագրության ժամկետ ներառյալ	Կարգավորիչ գործակից /կիրառվում է 1 տարվա համար հաշվարկված ապահովագրավճարի նկատմամբ/
11 ամսից մինչև 1 տարի (ներառյալ)	1.00
10 ամսից մինչև 11 ամիս (ներառյալ)	0.95
9 ամսից մինչև 10 ամիս (ներառյալ)	0.85
8 ամսից մինչև 9 ամիս (ներառյալ)	0.77
7 ամսից մինչև 8 ամիս (ներառյալ)	0.70
6 ամսից մինչև 7 ամիս (ներառյալ)	0.65
5 ամսից մինչև 6 ամիս (ներառյալ)	0.60
4 ամսից մինչև 5 ամիս (ներառյալ)	0.50
3 ամսից մինչև 4 ամիս (ներառյալ)	0.40
2 ամսից մինչև 3 ամիս (ներառյալ)	0.33
1 ամսից մինչև 2 ամիս (ներառյալ)	0.25
1 ամիս	0.20

6. ԻՆՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- Ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ անձը հաստատող փաստաթուղթ
- Ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագիր

Ծրագիրը կարգավորվում է Ընկերության Խորհրդի կողմից հաստատված «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրության պայմաններ»-ով: